թիւնը, դատարանները, դանձարանները, զօրքի կազմը, թղթատարական եւ կարաւանական կայարանները եւ թիկնապահական վաշտերը, այնպէս որ Պարթեւական տունը Բակտրիայում կարող էր կազմուած լինել 1000—2000 մարդուց, դա արտասովոր չէ, շատ բնական է:

Պարսիկ պատմագիրները հատ ու կտոր-ներ են թողել արքայից-արքայի ու իշխանական տոհմական տների եւ երկրագործ-արհեստաւոր ժողովրդի մէջ յարատեւ վէճերի եւ հակառակութիւնների մասին, որոնց յաճախ միջամուխ են եղել Զրադաշտի մոգերը դարէ դար: Մոգերը կենդրոնացած Սաւալան լեռների լանջերում, իրենց օթեւան վանքերում եւ այրերում, ապստամբներին հովանաւորել, աջակցել, պաշտպանել, խրախուսել են մաքառելու յափշտակիչ բռնակալ իշխանական վարիչների եւ սրանց հրամանակալ արքայից-արքայի դէմ: Արհեստաւոր եւ երկրագործ ժողովրդի տարած յաղթանակներից մի կենդանի նմուշ է դարբին Քահուէի գոգնոց դրոշակի պատմութիւնը կամ Մազդաքի Նուշիրվանի դէմ վարած մեծ պատերազմը, որոնք մեզ աւանդում են, թէ աշխատաւորները Զրադաշտի մոգերի հետ միշտ ստիպել են Շահն-շահերին խոնարհուել եւ գործադրել Զրադաշտական հողային օրէնքը, մի տասներորդից աւելի տուրք չդնել մշակողի ուսին: Զրադաշտական աւետարանները կորած